ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Բարխուդարյան Սերգեյ
Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի բաղկացուցիչ մասն է կազմում նաև դատապարտյալների պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ընթացակարգը:

ՀՀ-ում ներկայումս պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման որոշումը, որպես կանոն, կայացվում է հետևյալ երկու մարմինների՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերով անկախ հանձնաժողովի և դատարանի մասնակցությամբ:

Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման գործընթացն իրականացնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝ հանձնաժողովային կարգով: Հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկվում են քրեակատարողական հիմնարկի պետը, նրա տեղակալները, քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, դատապարտյալների բժշկական սպասարկման, անվտանգության ապահովման ստորաբաժանումների ղեկավարները[1]:

Կարծում ենք, որ թերություններ են առկա անկախ հանձնաժողովի ձևավորման գործընթացում: Մասնավորապես, անկախ հանձնա-

[1] Տե՛ս ՀՀ Կառավարության 2006թ.-ի օգոստոսի 24-ի N1304-Ն որոշումը՝ «Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կոմից քննարկման կարգը հաստատելու մասին»:

ժողովի կազմը վերանայման կարիք ունի: Անհրաժեշտ է, դրա ձևավորման ժամանակ ուշադրություն դարձնել այդ կառույցի մասնագիտացմանը, դրա համալրմանը հոգեբան, հոգեբույժ, քրեաբան փորձագետներով: Մասնավորապես, փորձագետ հոգեբանի, հոգեբույժի կամ քրեաբանի կարծիքը հաշվի է առնվում այն դեպքում, երբ դատարանը քննում է ցմահ ազատազրկման դատապարտված անձի կամ այն անձանց պայմանական վաղաժամկետ ազատման հարցը, ովքեր դատապարտվել են ավազակության, սպանության, սեռական ոտնձգումների, անձի ազատությանը ծանր վնաս պատճառելու և մի շարք այլ հանցագործությունների համար: Փորձագետը պետք է մասնավորապես կարծիք հայտնի, թե արդյ՞ոք դատապարտյալը դեռևս վտանգ է ներկայացնում հասարակության համար, թե՞ ոչ[2]: Կարծում ենք, որ նման պրակտիկան կարևոր կլիներ կիրառելի դարձնել նաև ՀՀ-ում:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի նաև այն դեպքում, երբ խոսքը գնում է հիշյալ ինստիտուտի կիրառմանը անչափահասների, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:

2022թ. ընդունված նոր քրեական օրենսգրքի 109 հոդվածի համաձայն (2003թ. քրեական օր-ով անչափահասի տարիքային շեմը 18-ն էր), մինչև 21 տարի լրացած հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) 3 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ քառորդը,

2) 5 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ երրորդը,

3) 10 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ երրորդը,

4) 10 տարուց ավելի ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան երկու երրորդը:

---

[2] Տե՛ս Ros Burnett, Shadd Maruna.So 'Prizon Works', Does in the Criminal Careers of 130 men released from Prizon under Home Secretaru. Michael Howard.The Howard Journal of Criminal Justice. 2004, Volume 43, issue 4., էջեր 390-404:

ՀՀ օրենսդրի նման մոտեցումն, ըստ էության արտացոլում է անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների (Պեկինյան կանոններ) պահանջները, որոնց 19.1 համաձայն՝ անչափահասին որևէ ուղղիչ հիմնարկում ներփակելը միշտ պետք է ծայրահեղ միջոց լինի[3]: ՄԱԿ-ի կանոններում նշվում է նաև, որ ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության հետ կապված հանձնարարականի համաձայն դաստիարակչական հիմնարկներում անչափահասների պայմանական վաղաժամկետ ազատումը պետք է կիրառել հնարավորինս առավել լայն մասշտաբներով և հնարավորինս առավել վաղ ժամկետներում[4]:

Հարկ ենք համարում նշել, որ անչափահասների պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կիրառման հատուկ նորմերը բացակայում են ինչպես ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, այնպես և ՀՀ Արդարադատության նախարարի հրամանով հաստատված «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեություն», կարգում, ինչից էլ պետք է եզրակացնել, որ ո՛չ դատարանը, ո՛չ անկախ հանձնաժողովը, ոչ էլ քրեակատարողական մարմինը չունեն անչափահասների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնող, նրա ուղղման աստիճանի գնահատման համար էական նշանակություն ունեցող իրական չափանիշներ, որոնք հնարավորություն կտային ապահովել քննարկվող ինստիտուտի կիրառման արդյունավետությունը անչափահաս դատապարտյալի նկատմամբ:

Դատապարտյալների դասակարգման առանձին խմբերի պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ենթատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման առանձնահատկություններին:

---

[3] Տե՛ս Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինյան կանոններ), 29.11.1985:

[4] Տե՛ս Правила Организации Объединенных Наций, касающиеся защиты несовершеннолетных, лишенных свободы приняты 14 декабря 1990г. Резолюцией 45/113 Генеральной Ассамблеи ООН.

ՌԴ-ում Ե.Ն Կազակովան ցմահ ազատազրկման դատապարտված անձանց շրջանում իրականացրել է ուսումնասիրություն, որի արդյունքում փաստվել է, որ քննարկվող կատեգորիայի դատապարտյալների հանդեպ իրականացվող ուղղիչ ներգործության արդյունավետությունը սկսում է նվազել դատապարտյալի կողմից պատժի 7-ից 10 տարին կրելուց հետո: 10 տարուց ավելի ազատազրկման կրման պարագայում դատապարտյալների մեծ մասի մոտ անհետանում է իրենց կատարած հանցանքի համար մեղքի զգացումը, կրավորական վերաբերմունք է ձևավորվում ուղղիչ ներգործության նկատմամբ[5]:

Նման պարագայում հարց է առաջանում, թե որքանով՞ է հիմնավորված ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ազատման համար անհրաժեշտ նման երկարատև ժամանակահատվածի սահմանումը: Այդ առումով կարծում ենք, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար որպես անհրաժեշտ նվազագույն ժամկետ պետք է սահմանվի 15 տարի ժամկետով ազատազրկումը:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման ժամանակ կարևոր նշանակություն ունի այն հարցի պատասխանը, թե ո՞վ և ինչպես պետք է իրականացնի հսկողություն՝ պատժի կրումից ազատված անձի նկատմամբ:

Սահմանելով վաղաժամկետ ազատման պայմանները՝ պետք է նշել, որ դրանք միայն այն դեպքում կարող են անհրաժեշտ արդյունք տալ և նպաստել ազատված անձանց ուղղվելուն և դեպի հասարակություն վերաինտեգրվելուն, եթե այն ուղեկցվի պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ վերահսկողության մշտական միջոցներով: Սահմանվող վերահսկողության նպատակը պետք է լինի՝ ամրապնդել ուղղվելու այն արդյունքները, որոնց դատապարտյալները հասել են ուղղիչ հիմնարկներում:

Պայմանական վաղաժամկետ ազատված անձանց վարքագծի նկատմամբ հսկողության իրականացման կարևոր գործոն է համարվում նաև նրանց կողմից նոր հանցագործությունների կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը: Իսկ հանցագործությունների նախազգուշացման հետ կապված աշխատանքները ավելի արդյունավետ

[5] Տե՛ս Казакова Е.Н. Условно –досрочное освобождение от отбывания пожизненного лишения свободы; проблемы и пути их решения. Вестник Владимирского юридического института.2008г.N3(8) стр. 40-49:

կազմակերպելու համար նրանց նկատմամբ հսկողություն իրականացնող համապատասխան մարմինները տվյալ անձանց վարքագծի և ապրելակերպի վերաբերյալ պետք է ունենան ամբողջական տեղեկատվություն:

Պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ հանցագործությունների նախազգուշացման վերաբերյալ աշխատանքը պետք է տարվի հսկողական գործառույթների հետ զուգահեռ:

Ինչպես իրավացիորեն նշել է Ի.Վ. Շմարովը, «սոցիալական հսկողության ոլորտը որոշում է քաղաքացու կողմից իրականացվող գործողությունների և դերի հասարակական նշանակությամբ: Մարդու վարքագիծը որքան շատ շոշափում է հասարակության պահանջմունքները, ավելի ուժեղ է սոցիալական հսկողությունը, ավելի էականորեն է տեղափոխվում իրավական կարգավորման ոլորտ և ապահովվում է համապատասխան պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների գործունեությամբ[6]:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կատարելագործումը և դրա արդյունավետության բարձրացումը, որոշակի առումով հնարավորություն կտա օժանդակելու թեկնածուի ուղղման ճիշտ աստիճանը սահմանելուն:

Իրավական ոչ հստակությունը, առանձին հասկացությունների օրենսդրական բնորոշման բացակայությունը, խնդիրներ են ստեղծում այս ինստիտուտի կիրառման միատեսակությունն ապահովելիս և հաճախ հանգեցնում իրավակիրառ պրակտիկայում ծագող խնդիրների իրարամերժ լուծումների, սխալների: Առ այսօր հստակեցված չէ, թե ո՞րն է դատապարտյալի «ուղղման» այն աստիճանը, որը բավարար է կոնկրետ անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ նման ազատումը մերժելու համար, կամ ի՞նչ չափանիշների հիման վրա պետք է որոշվի այդ աստիճանը:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու որպես հիմնական գործոն է հանդիսանում առանց պատժիչ ներազդեցության դատապարտյալի վերասոցիալականացումը:

Պետությունը որպես քրեական քաղաքականություն մշակող, առաջնային տեղ պետք է հատկացնի և հետևողականորեն կարգավորի

---

[6] Տե՛ս Шмаров И.В. Предупреждение преступлений среди освобожденных от наказания.М.Юритиздат,1974., էջ 264:

հանցանք կատարած անձի վերասոցիալականացման հիմնահարցերը, քանի որ դրանով կկարգավորվեն պատիժը կրած անձի կողմից հասարակական բնականոն հարաբերություններ ինտեգրվելու մի շարք կարևորագույն հիմնահարցեր:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննակվում են պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի օրենսդրական և կազմակերպական հիմքերը և դրանց բարելավման ուղիները: Մասնավորապես, հեղինակն ընդգծում է պատիժը կրելուց պայմանական վաղաժակետ ազատելու ինստիտուտի առանձնահատկությունները առանձին խմբերի դատապարտյալների նկատմամբ: Առաջարկվում է օրենսդրական կարգով նախատեսել համապատասխան կարգավորումներ պատիժը կրող անձանց սոցիալական խնդիրների իրականացման համար օգնություն տրամադրելու պարտականություն կրող սուբյեկտների, դրա իրականացման կարգի և պայմանների վերաբերյալ:

Բանալի բառեր. պատիժ, պայմանական վաղաժամկետ ազատում, դատապարտյալ, վերասոցիալականացում, օրենսդրություն, անկախ հանձնաժողով, դատարան:

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И ОРГАНИЗАЦИОННЫЕ ОСНОВЫ ИНСТИТУТА УСЛОВНО - ДОСРОЧНОГО ОСВОБОЖДЕНИЯ ОТ ОТБЫТИЯ НАКАЗАНИЯ И ОСОВОПОЛАГАЮЩИЕ ВОПРОСЫ ИХ РЕФОРМИРОВАНИЯ

Бархударян Сергей
Кандидат юридических наук, доцент
АГПУ им. Х.Абовяна

РЕЗЮМЕ

В статье рассматриваются законодательные и правовые основы условно-досрочного освобождения от отбытия наказания и основополагающие вопросы их реформирования. В частности автор подчеркивает особенности условно-досрочного освобождения от отбытия наказания в отношении отдельных групп осужденных. Предлагается

в законодательном уровне предвидение соотвествующих регулирований для реализации социальных вопросов отношении лиц, отбывающих наказание, и субьектов, которые несут обязанности для оказания помощи, о порядке и условий осуществления.

Ключевые слова: наказание, условно досрочное освобождение, осужденный, ресоциализация, законодательство, независимая комиссия, суд.

LEGAL AND ORGANIZATIONAL GROUNDS OF INSTITUTE OF CONDITIONAL EARLY RELEASE FROM PUNISHMENT, THE WAYS TO IMPROVE THEM

Barkhudaryan Sergey
Candidate of Law, Associate Professor
ASPU after Kh. Abovyan

SUMMARY

Legal and organizational grounds of institute of conditional early release from punishment, as well as the ways to improve them are discussed in this article. Particularly, the author emphasizes the pecularities of the institute of conditional early release from punishment for a separate group of convicts. It is proposed to foresee corresponding regulations by a legislaive procedure for entities responsible to assist in implementing social tasks of convicts, for the implementation procedure and conditions.

Keywords: punishment, conditional early release, convict, re-socialization, legislation, independent commission, court.